

ՄՍ. ԼԻՍԻ ՑՅԱՆ

2189

ԱՔՈՒ ՀԱՍԱՆԻ ՄԱԾԻԿՆԵՐԸ



891.995.

L-61

ՊԵՏՆԻՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

891.9915

L-61

US. LITHUANIAN

30 MAY 2011

ԱՐՈՒ-ՀԱՍԱՆԻ ՄԱՇԻԿՆԵՐԸ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔՅԱՔ

Նկարներ

Ա.Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ

ՀԱՅԵՍՏ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 8



59269-66

1

Ո՞վ չէր ճանաչում Բաղդադում Աբու-Հասանի հռչակավոր մաշիկները, այն կողմերում ո՞ւմը հայտնի չէին Աբու-Հասանի յերեվելի մաշիկները:

Քթերը թափած, կրունկների մեկը դեսը, մյուսը դենը ծոված, հազար տեղից ծակ-ծակ, գույնը վաղուց թռած, քրքրված, կեղտոտ մաշիկները նմանը չունեյին ամբողջ Բաղդադում:

Ծերունիները հազիվ էին հիշում այն ուրը, յերբ այդ մաշիկները առաջին անգամ զարգարեցին Աբու-Հասանի վոսկրոտ վոտները: Այն ժամանակ Աբու-Հասանը թեև նույնչափ բարձրահասակ ու բարակ էր, բայց դեռ չորացած, չըմըշկած չէր, մորուքը թեյեվ նույնչափ յերկար ու փառավոր էր, բայց դեռ վոչ մի սպիտակ մազ չէր յերեվում, դեռ հինալից բոլորովին դեղնած չէր: Այն ժամանակից Աբու-Հասանի յուզոտած կապան մի յերկու անգամ փթեց ու նորով փոխարինվեց, դիտի կեղտոտ չալման մի յերկու անգամ դզզզվեց ու բոլորովին նորոգվեց, վորդնոտ չապիկը մի քանի անգամ քրքրվեց ու տեղը նորը կարվեց, բայց հռչակավոր մաշիկները ավելի յերկար ապրեցին ու առաջվա պես պաշտպանում էին Աբու-Հասանի հոտած գուլպաները փոշուց ու ցեխից, առաջվա պես ամեն առավոտ զարթեցնում էին բազարի պահուստներին, յերբ Աբու-Հասանը ծանր ու բարակ, ահագին բանալիներ ձեռքին, ամենից վաղ քայլում էր փողոցի սալահատակով դեպի իր խանութը:

2

Մի ուր Աբու-Հասանը յերկար ու բարակ մտածելուց հետո վերջապես վճռեց բաղնիք գնալ.

— Համ շատ ժամանակ է չեմ յեղել, համ ել եժան ե: Կարծեմ՝ մի քիչ ել կեղտոտ պիտի լինիմ:

Հանվելիս ծանոթներից մեկը նկատեց ու ասավ.

— Պատվելի Աբու-Հասան, յերանի յե՞րբ պիտի դեն դցես էտ աղտոտ ցնցոտիները, յե՞րբ պիտի դեն չալրես էս մաշիկները, վոր վոտքիդ փթել են:

— Հա, հա յես ել եմ տեսնում՝ մաշիկներս մի քիչ մաշվել են,— մրթմրթաց Աբու-Հասանը և շտապելով ներս մտավ բաղնիք:

Բաղնիքից դուրս գալուց հետո, հագնվելիս Աբու-Հասանը իր քրքրված մաշիկների կողքին նկատեց մի դույզ նոր սիրուն, գուլտրիկ մաշիկներ: Ու բացահայտեց:

— Անշուշա, բարեսիրտ ծանոթս և ես մաշիկները ինձ նվեր թողել: Այլահը նրան բարի տա, մեկ ուրը հազար անի, անսպառ լավությունով լցնի նրա սուներ:...

Ու անվերջ որհնելով առատաձեռն ծանոթին՝ Աբու-Հասանը հագալ նոր կոշիկներն ու յերջանիկ դուրս գնաց բաղնիքից:

3

Դու մի ասա, այդ մաշիկները զաղերինն և յեղել:

Դուրս է գալիս զաղին բաղնիքից, դես մաշիկ, դեն մաշիկ, չկա: Գոռգոռում է զաղին: Բաղնիսպանը, ծառաները գլուխները կորցրած վորոնում են: Մեկ էլ ահա բերում են Աբու-Հասանի փառավոր մաշիկները, քթերը թափած, կրունկների մեկը դեսը, մյուսը դենը ծոված, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրված, կեղտոտ մաշիկները:

— Ես հո Աբու-Հասանի զգվելի մաշիկներն են, — գոչում է զաղին. — են ժլատը գողացել է իմ նոր մաշիկները: Ծուռով, հասեք բռնեցեք:

Հասնում են Աբու-Հասանին հենց իր տան դռների առջև, բռնում են տանում դատարան: Կարո՞ղ եր արդարանալ վոր... գողացած մաշիկները վրադին եյին:

Յեվ Աբու-Հասանը պետք է բանա նստեր, և, ո՞հ սոսկալի բան, տուգանք վճարեր, և նորից իր հին մաշիկներով տուն վերադառնար:

Այդ ուրվանից Աբու-Հասանը ատեց իր հին հրո-չակավոր մաշիկները. չե՞՞ վոր բոլոր զժբախտությունների պատճառը նրանք էյին յեղել:

Տուն վերադառնալուն պես հանեց մաշիկները ու չպրաեց առուն, վոր հոսում եր տան առջևից:

Յերեք որ հետո ձկնորսները ուռկանով ձուկ վոր-աալիս ջրից հանեցին, ձկան տեղ, մաշիկներ. քթերը թափած, կրունկների մեկը դեսը, մյուսը դենը ծով-ված, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրված, կեղ-տոտ մաշիկներ:

— Ես հո Աբու-Հասանի անպիտան մաշիկներն են, — պռռացին նրանք ու բարկացած տարան ձգեցին Աբու-Հասանի բաց պատուհանից ներս: Մաշիկներից մեկը դիպավ հոսուց մնացած թանկագին հախճապակի սափորին ու փչրեց:



Մոտ վազեց Աբու-Հասանը, տեսավ իր հին հոգա-
կավոր մաշիկները, տեսավ փշրված սափուրը, յերկու
ձեռքով գլխին տվավ. ել ինչ: Առավոտը, լույսը բաց-
վելուն պես իջավ այդին ու թաղեց, խորը թաղեց մա-
շիկները մի ծառի տակ, վոր ազատվի ու ել նրանց յե-
րեսը չտեսնի:



Հարեմանը բախից նկատեց ու մտքումն ասավ.

— Ես լավ ե, վերջապես իմացա՝ վո՞րտեղ ե պահում Աբու-Հասանը իր վոսկինները:

Ու հենց նույն գիշեր ծածուկ մտավ Աբու-Հասանի այգին: Փորեց, փորեց, արմատահան արեց թփերը, վերջապես ծառի տակից դուրս յեկավ մի ինչ վորբան:

Լուսնյակի լուսով լավ զննեց յեվ տեսավ՝ մաշիկներ եյին, քիթերը թափած, կրունկների մեկը դեսը, մյուսը դենը ծոված, հաղար ու մի ուղից ծակ-ծակ, քրքրված, կեղտոտ մաշիկները:

— Ես հո Աբու-Հասանի գարշելի մաշիկներն են, — կանչեց հարեմանը ու զայրացած այնպես տվավ մաշիկները Աբու-Հասանի տան դռան, վոր խեղճ ծերուկը վեր թռավ տեղից ու դողդողալով շապկով վազեց տեսնելու՝ գողերը հո չե՞ն մտել իր սնդուկները փախցնելու:

Վախից դուռը բաց չարավ. բայց եւ քունը կգա՞ր աչքերին:

Առավոտյան, յերբ դուռը բաց արավ՝ ապշած մնաց. իր հին հոչակավոր մաշիկները ընկած եյին չեմքին, իսկ այգին, իր աչքի լույս այգին, տակնուվրա արած:

Աբու-Հասանի ծնկները դողացին, աչքերը դեպի յերկինք դարձան, ձեռքերը վեր պարզվեցին ու նա կարողացավ միայն բացականչել.

— Ալլահ, այս ի՞նչ պատիժ ե:

Ամբողջ ուրբ խանութում Աբու-Հասանը միմիայն մի բանի մասին եր միտք անում՝ թե ինչպես ազատվի իր հին հոչակավոր մաշիկներից:

Յեվ յերեկոյան դեմ կամացուկ գիմեց քաղաքից դուրս:

— Այ հրա՛շք, Աբու-Հասանը զբոսնելու յե գնում, — ասում եյին զարմացած նրան պատահող ծանոթերը:





Աբու-Հասանը գնաց հեռու, գետի ափով, ջուր-
ջը նայեց, տեսավ մարդ չկա, ու ջուրը նետեց իր մա-
շիկները:

— Գնացի՛ն, — ուրախանում էր նա, — ծո՛վը գնա-
ցին:

Յեվ հանգիստ սրտով վերադարձավ տուն ու ա-
նուշ քնեց:

7

Գետից ջուր էր բերված քաղաքի հրապարակները:

Մյուս ուրը, Բաղդադի կանայք յերբ գնացին ավա-
զանից ջուր առնելու, տեսան վոր ջուրը կտրվել է, ա-
վազանը դատարկ: Կանչեցին քաղաքապետին, քանդա-
տեցին խողովակները և հանկարծ խողովակների մե-
կից դուրս յեկան մաշիկներ, թթերը թափած, կրունկ-
ների մեկը դեսը, մյուսը գենը ծոված, հազար ու մի
տեղից ծակ-ծակ, քրքրված, կեղտոտ մաշիկներ:

— Ես հո Աբու-Հասանի բորբոսնած մաշիկներն
են, — գոռացին ամենքը. — բերե՛ք Աբու-Հասանին,
քա՛շ տվեք Աբու-Հասանին դատավորի մոտ, ետ ան-
պիտան ջուր ապականողին:

Դարձյալ կանգնեց Աբու-Հասանը դադիի յառջև:

Ինչ պիտի ասեր. բաղձությունը իր աչքովն էր
տեսել նրա մաշիկները ջրի խողովակի մեջ: Աբու-Հա-
սանը պիտի վճարեր մեծ տուգանք և ուտեր մտրակի
հիսուն հարված:

— Մեռա՛, — աղաղակում էր նա, — վայ, մեռա՛...

Տնքալով, անիծելով այն ուրը, յերբ գնել էր իր
հոչակավոր մաշիկները, անիծելով իր սև բախտը, նա
վերադառնում է տուն ու կրկնում.

— Ուրիշ ճար չկա, ուրիշ ճար չկա, պիտի այրեմ,
կրակը պիտի գցեմ...

8

Բայց մաշիկները այնպես թա՛ց էյին: Աբու-Հա-
սանը դրավ պատուհանին, վոր չորանան: Տան
կատուն ցատկեց պատուհանը արեվի տակ տաքանալու
համար, կպավ մաշիկներին, մաշիկները գլորվեցին



ցած՝ փողոցը, ընկան ուղղակի տակովն անցնող կնոջ
դիմին:

Կինամարդը ցավից ճչաց. հավաքվեց ժողովուրդը
յեւ ի՞նչ տեսնի: Ծախաւ ճղվել է, արյունը կաթիլ-
կաթիլ ծրծրում է, իսկ գետնին ընկած են մաշիկներ
քթերը թափած, կրունկների մեկը դետը, մյուսը դենը
ծոված, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրված,
կեղտոտ մաշիկներ:

— Տեսե՛ք, ես հո Աբու-Հասանի զազրելի մաշիկ-
ներն են,— գոչեցին ամեն կողմից:— Այ Աբու-Հա-
սան, այ Աբու-Հասան, դո՛ւրս արի, մարդասպա՛ն:
Աբու-Հասանի դեմքը յերեվաց պատուհանից յեւ
մի ակնթարթում կտավի պես գունատվեց:

Ամբոխը քաշեքաշ տարավ նորից պողի մոտ:

— Արդա՛ր դատավոր, վոգորմի՛,— աղերսում եր
Աբու-Հասանը՝ գետնին տարածված,— լսի՛ ինձ: Իմ
մաշիկները, իմ անիծած մաշիկներն են ինձ ես տեղը
հասցնողը: Հոգիս դուրս յեկավ, ճար չունեմ: Ինչ ու-
ղում ես՝ արա, միայն թե փրկի ինձ մաշիկներիս
ձեռքիցը:

Հադին չկարողացավ ծիծաղը պահի:

— Վե՛ր կաց, Աբու-Հասան,— ասավ նա, — տես,
առաջ դու չեյիր ուզում քո հին հոչակավոր մաշիկնե-
րից բաժանվես, հիմա յեւ մաշիկներդ չեն ուզում քե-
զանից ձեռք քաշեն: Ներողութուն խնդրի՛ր այս կնո-
ջից, բժշկի վարձը տո՛ւր ու ճանապարհ դի՛ր, ինքդ եւ
դնա՛ քո բանին: Մաշիկներդ համար եւ դարդ մի
անի:

Ու հրամայեց Աբու-Հասանի մաշիկները կախն
Բաղդադի մեծ հրապարակի վրա:

Ո՞վ չեր ճանաչում Բաղդադում Աբու-Հասանի
այդ մաշիկները, քթերը թափած, կրունկների մեկը
դետը, մյուսը դենը ծոված, հազար ու մի տեղից ծակ-
ծակ, քրքրված, կեղտոտ մաշիկները, վո՞ր ժլատը
չեր սարսափում դրանց մոտիցն անցնելիս:



Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Դասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան



Գլավխիտի լիազոր՝ Կ—4627. Հրատ. 4269

Պատվեր 41. Տիրաժ 4000

Թուղթ 62×94. Տպագր. 1 մամ.

Մեկ մամուլում 33792 նիշ. Հեղինակային 3/4 մամ.

Հանձնված է արտագրության 3 հունվ., 1938 թ.

Ստորագրված է տպագրության 29 հունվ., 1938 թ.

Գինը 1-75 կոպ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0400171

ԳԻՆԸ 1/Ռ. 75 Կ.

9443



Ս. ԼԻՍԻՍ
ԲԱՇՄԱԿԻ ԱԲՈՒ ԴԱՏԱՆ
ԴԻԱ. ԱՐՄ. ՍՍՐ ԵՐԵՎԱՆ